Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ (ՃՏՊ158, ՃՏՊ158Ա)**
ECTS կրեդիտ	4 կրեդիտ
Դասընթացի պատասխանատու դասախոս	Նալբանդյան Գ.Ա., պրոֆեսոր
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • սահմանել պատմական միջավայրի ուսումնասիրման, վերլուծության, վերակառուցման հիմնախնդիրները, • մեկնաբանել ճարտարապետական հուշարձանի պահպանությանը նպաստող հետազոտական գործընթացը, • ձևակերպել ճարտարապետական հուշարձանների վերականգնման և վերակառուցման արդի հիմնական սկզբունքներն ու մեթոդները, • ճանաչել հուշարձանների վերականգնման, հարմարեցման և օգտագործման նախագծային առանձնահատկությունները: *(կարողություններ)* • կատարել պատմամշակութային ժառանգության ուսումնասիրություն ու գնահատում, • կազմել պատմական միջավայրի պատմահենակետային հատակագիծ, • կատարել պատմական գոտիների մշակում, լուծել պատմական միջավայրի պահպանման և վերակառուցման նախագծային խնդիրներ:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Պատմական միջավայրի վերակառուցում: • Պատմական քաղաքների վերակառուցման հիմնական մոտեցումները: • Պատմահենակետային հատակագիծ: Պատմական գոտիների նախագիծ: Հուշարձանի պահպանության գոտիներ: Կառուցապատման կարգավորման գոտիներ: • Պատմական բնակավայրերի վերակառուցման համաշխարհային փորձը և մշակութային ժառանգության պահպանությանը վերաբերող միջազգային իրավական նորմատիվ փաստաթղթերը: • Հուշարձանների վերականգնման պատմական սկզբունքները և ժամանակակից դրույթները: • Հուշարձանների վերականգնման ժամանակակից դրույթները:

	• Վերականգնվող հուշարձանի համալիր հետազոտությունը՝ որպես վերականգնման նախագծային հիմնավորում: • Գիտական հաշվետվություն վերականգնման աշխատանքների մասին: • Հուշարձանի հիմնատակերի և հիմքերի ամրացում: • Վերգետնյա կոնստրուկցիաների ամրացում:
Դասընթացի գրականության ցանկ	• Թամանյան Յու.Ա., Քարե տարեգրության վերականգնումը, Երևան, 1981: • Հարությունյան Վ.Մ., Նալբանդյան Գ.Ա., Գրիգորյան Ա. Գ., Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003: • Հովհաննիսյան Կ.Լ., Ճարտարապետական հուշարձանների վերանորոգումը Սովետական Հայաստանում, Երևան, 1978: • Միխայլովսկի Ե.Վ., Ճարտարապետական հուշարձանների վերականգնման մեթոդիկա, /ռուս./, Մոսկվա, 1977: • Պոդյապոլսկի Ս.Ս. և ուրիշներ, Ճարտարապետական հուշարձանների վերականգնումը,/ռուս./, Մոսկվա, 1988:

ՃՏՊՃԺՎՎԳԱ և Պ ամբիոնի վարիչ, ճ.թ., դոցենտ՝ Է.Պ.Հարությունյան